Մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի /20, 19, 18 դասաժամ / , երաժշտություն / 2 դասաժամ/, տեխնոլոգիա / 3 դասաժամ/, կերպարվեստ / 2 դասաժամ/, ռուսաց լեզու /10 դասաժամ/, անգլերեն / 5 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստային և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /ձև 1/,

-1 լուսանկար 3X 4 չափի,

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

- ինքնակենսագրություն/ ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը ներացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ.-ի օգոստոսի 23-ից՝ 2023թ.-ի սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ.** սեպտեմբերի **11 -ին՝ ժամը 14:00-ին** ՝ՀՀ Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Արարատի մարզ, գ.Արգավանդ, Կենտրոնական 28:

Տեղեկությունների համար զանգահարել /094/ 87-12-02/ հեռախոսահամարով: